

ՈՐԴԵՑՈՒՅՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՍԲ
ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Սույն ուղեցույցը նախատեսված է լրագրողների, խմբագիրների և գովազդատուների համար, որոնք աշխատում են տպագիր, առցանց և հեռարձակվող լրատվամիջոցների տարբեր ոլորտներում, ներառյալ՝ ծրագրերի, լրատվության, գովազդի և ռադիոհեռուստատեսային կայանների այլ հեռարձակումների ոլորտում և /կամ տպագրվում են լրագրերում, ամսագրերում կամ սոցիալական ցանցերում:

Հեղինակ՝ Իլիանա Բալաբանովա
Հայաստանյան օրինակները՝
Անի Կոջոյանի կողմից
դեկտեմբեր 2020թ.

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հեղինակ՝ Իլիանա Բալաբանովա
Հայաստանյան օրինակները՝
Անի Կոչոյանի կողմից
դեկտեմբեր 2020 թ.

Եվրոպայի խորհուրդ

Սույն աշխատանքում
արտահայտված
կարծիքները
հեղինակին են և
կարող են չհամընկնել
Եվրոպայի խորհրդի
պաշտոնական
քաղաքականության
հետ:

Կազմը և Էջադրումը
Computer service LLC

Լուսանկարը
©shutterstock

Եվրոպայի խորհուրդ
F-67075 Strasbourg Cedex
www.coe.int

© Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2020թ.

Բովանդակություն

Ուղեցույցի շրջանակը և նպատակը	4
Եզրույթների բառարան	6
Գեղեր և սեռ	6
Գեղերային հիմքով բռնություն և բռնություն կանանց նկատմամբ	8
Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ձևերը	9
Լրատվամիջոցներ, գեղերային հավասարություն և բռնություն կանանց նկատմամբ	12
Չեռանկարային գործելակերպ. Իսպանիա	17
Ինչպե՞ս խուսափել գեղերային կարծրատիպերից	18
Կանանց նկատմամբ բռնության լուսաբանումը	21
Չամատեքստ / լուսաբանում	21
Չարցագրույցներ	22
Լուսանկարներ	24
Չատուկ ուղենիշներ	25
Ներպետական իրավական շրջանակ և համատեքստ	26
Չավելված I. Լուսաբանման և վերլուծության օրինակ	35
Չավելված II. Կանանց նկատմամբ բռնությունից տուժածների և աջակցություն ցուցաբերող հաստատությունների և կազմակերպությունների տվյալները	38

Ուղեցույցի շրջանակը և նպատակը

Սույն ուղեցույցը նախատեսված է լրագրողների, խմբագիրների և գովազդատուների համար, որոնք աշխատում են տպագիր, առցանց և հեռարձակվող լրատվամիջոցների տարբեր ոլորտներում, ներառյալ՝ ծրագրերի, լրատվության, գովազդի և ռադիոհեռուստատեսային կայանների այլ հեռարձակումների ոլորտում և /կամ՝ տպագրվում են լրագրերում, ամսագրերում կամ սոցիալական ցանցերում:

■ Ուղեցույցում ներկայացվում են առաջարկություններ և ուղեցույցներ **գենդերային հավասարակշռված լրահաղորդումների** վերաբերյալ, ինչը նշանակում է կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը տպագիր, առցանց և հեռարձակվող լրատվամիջոցներում, ինչպես նաև կանանց և տղամարդկանց ներկայացումը՝ ոչ կարծրատիպային, ոչ խտրական և ոչ սեքսիստական լույսի ներքո: Գենդերային հավասարակշռված լուսաբանման համար կարևոր է ոչ միայն, թե քանի կին է ներկայացված, այլև թե ինչպես են կանայք ներկայացված: Գենդերային հավասարակշռված լուսաբանմամբ հավասարաչափ կերպով ճանաչվում են կանանց և տղամարդկանց փաստացի սոցիալական և մասնագիտական ձեռքբերումները, առաջիադասումը, շահերը և դերերը: Տղամարդկանց և կանանց արդար պատկերումը լրատվամիջոցներում մասնագիտական և էթիկական ձգտում է, որը նման է լրագրության այլ էթիկական սկզբունքներին, ինչպես հարգանքը ճշմարտության նկատմամբ, ճշգրտությունը, արդարությունը, անկողմնակալությունը և ազնվությունը:

■ Ուղեցույցը նաև լրագրողներին, խմբագիրներին և գովազդատուներին հնարավորություն է տալիս կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության խնդիրները լուսաբանելիս ցուցաբերել արհեստավարժ և էթիկական մոտեցում: Կանանց նկատմամբ բռնությունը կանանց մարդու իրավունքների ոտնահարում է: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության լուսաբանումը պահանջում է զգայուն և հարգալից մոտեցում: Լրատվամիջոցներն էթիկական պատասխանատվություն են կրում՝ բնականոն չդարձնելու կանանց նկատմամբ բռնությունն այնպիսի ուղերձների միջոցով, որոնք նպաստում են կանանց նկատմամբ բռնությանը և պարզունակացնում են այն: Լրատվամիջոցները նաև պատասխանատվություն են կրում՝ խորացնելու հասարակության գիտելիքները և զգայունությունը կանանց

Նկատմամբ բռնության երևույթի հանդեպ՝ անդրադառնալով կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին և դրանք միշտ ներկայացնելով գենդերային հավասարության և կանանց մարդու իրավունքների հարցերի լույսի ներքո: Լրատվամիջոցները նաև կարող են առանցքային դեր խաղալ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում և բարձրացնել մարդու հավասար և անբակտելի իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը :

Սույն ուղեցույցի նպատակն է՝

- ▶ Խրախուսել լրագրողներին, խմբագիրներին, գովազդատուներին և բոլոր մեդիա մասնագետներին՝ կիրառելու **գենդերային առումով ներառական լեզու**, ինչպես նաև խորացնելու գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության մասին ընկալումները:
- ▶ Ապահովել կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածություն և տեսանելիություն լրատվամիջոցներում և հեռուստառադիոհաղորդումներում:
- ▶ Խուսափել սեքսիզմից, սեքսիստական գովազդից, լեզվից և համատեքստից տպագիր և հեռարձակվող բոլոր լրատվամիջոցներում:
- ▶ Ուղղորդել, թե ինչպես պատկերել կանանց և տղամարդկանց, որպեսզի արտացոլվեն նրանց իրական սոցիալական և մասնագիտական ձեռքբերումները, մասնագիտական առաջխաղացումը, հետաքրքրությունները և դերերը:
- ▶ Ուղղորդել, թե ինչպես խթանել հավասարություն և խթանել փոփոխություններ՝ ի փոխարեն գենդերային կարծրատիպերի արմատավորման, որոնք վնասակար են:
- ▶ Երաշխավորել, որ կանանց նկատմամբ բռնության դեպքերը լուսաբանող կամ դրանց լուսաբանման գործում որոշակի դեր խաղացող բոլոր լրագրողները և մեդիա մասնագետները կարող են ապահովել բռնության ենթարկվածների, նրանց ընտանիքների և համայնքների, ներառյալ՝ նրանց օգնության ձեռք մեկնողների անվտանգությունը, գաղտնիությունը և արժանապատվությունը:

- ▶ Ուղղորդել՝ բարձրացնելու կանանց նկատմամբ բռնության մասին իրազեկվածությունը և հակազդելու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին առասպելներին և հնացած վերաբերմունքին:

Եզրույթների բառարան¹

Գեղեղեր և սեռ

- ▶ **Գեղեղերային** նշանակում է սոցիալական դերեր, վարքագծի տիպեր, գործունեության տեսակներ և առանձնահատկություններ, որոնք տվյալ հասարակությունը պատշաճ է համարում կանանց և տղամարդկանց համար²:
- ▶ **Կարծրատիպերը** մարդկանց որևէ խմբի վերաբերյալ համոզմունքներ են:
- ▶ **Գեղեղերային կարծրատիպը** ընդհանրացված տեսակետ է կամ կանխակալ պատկերացում հատկանիշների կամ բնորոշ գծերի կամ դերերի վերաբերյալ, որոնք ունեն կամ պետք է ունենան կամ կատարեն կանայք և տղամարդիկ: Գեղեղերային կարծրատիպը վնասակար է, երբ այն սահմանափակում է կանանց և տղամարդկանց անձնական ունակությունները զարգացնելու, մասնագիտական առաջխաղացմանը հետամուտ լինելու և կյանքի վերաբերյալ ընտրություն կատարելու կարողությունները:
- ▶ **Սեռ** նշանակում է ծննդյան ժամանակ որոշված կենսաբանական բնութագրիչներ:
- ▶ **Սեքսիզմը** գաղափարախոսություն է, որը հիմնված է այն համոզմունքի վրա, որ մի սեռը գերադաս է մյուսի նկատմամբ: Սեքսիզմը ցանկացած գործողություն, ժեստ, տեսողական ներկայացում է, բանավոր կամ գրավոր խոսք, գործելակերպ կամ

1. Եզրույթների բառարանը մշակվել է՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի սահմանումների, Միավորված ազգերի կազմակերպության Գերագույն հանձնակատարի մարդու իրավունքների գրասենյակի սահմանումների: Տե՛ս <https://www.ohchr.org/EN/Issues/Women/WRGS/Pages/GenderStereotypes.aspx>, ինչպես նաև՝ պրոֆ. Միլվիա Վոլբիի՝ միջազգայնորեն ընդունված սահմանումների, տե՛ս Walby, S. Theorizing Patriarchy. Oxford: Blackwell, 1990:

2. Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան (2011) տրամադրում է գեղեղեր բառի առաջին իրավաբանորեն պարտադիր սահմանումը (Յոդված 3գ): Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210>

վարքագիծ, որը հիմնված է այն գաղափարի վրա, որ անձը կամ անձանց խումբը ստորադաս է իր(ենց) սեռի պատճառով, ինչը տեղի է ունենում հանրային կամ մասնավոր տիրույթում՝ լինի դա առցանց, թե՛ առերես: Սեքսիզմը կարող է ազդել ցանկացած մարդու վրա, սակայն հասարակության մեջ առավել հաճախ կիրառվում է կանանց և աղջիկների նկատմամբ: Սեքսիզմը լրատվամիջոցներում կանանց մարմինների օգտագործման և վերահսկման համակարգի մի մաս է՝ լրատվության ցանկացած ձևով և տեսակով մարդու արժանապատվությունը, մարդու իրավունքները, կանանց և տղամարդկանց հավասարությունը ոտնահարող ուղերձների ստեղծման, խթանման կամ տարածման միջոցով: Սեքսիզմը լրատվամիջոցներում դրսևորվում է կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների սեռական, սեռականացված և ռասայականացված պատկերումների և մարմնավորման միջոցով, ինչպես նաև իրենց տեսակետների և կարծիքների հավասարակշռված և տեղեկացված քննարկումը ներկայացնելու փոխարեն՝ կանանց արտաքին տեսքին, հագուստին և վարքագծին սևեռման միջոցով:

Սեքսիզմը կապված է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հետ, ինչի արդյունքում «ամենօրյա» սեքսիզմի գործողությունները կազմում են մշտական բռնության տարր՝ ստեղծելով ահաբեկման, վախի, խտրականության, բացառման և անապահովության մթնոլորտ, որը սահմանափակում է հնարավորությունները և ազատությունը:³ Խուսափելով սեքսիզմից՝ լրատվամիջոցները կնպաստեն սեռի հիմքով խտրականության բացառմանը, կկանխարգելեն ատելության հրահրումը և կխթանեն կանանց նկատմամբ բռնության հանդեպ զրո հանդուրժողականություն: Օգտագործելով ոչ կարծրատիպային և գենդերային առումով ներառական լեզու և պատկերներ՝ լրատվամիջոցները կնպաստեն հասարակության շրջանում սեքսիզմի և սեքսիստական վարքի վերացմանը:

- ▶ **Սեքսիստական լեզուն** այն լեզուն է, որը բացառում է մեկ կամ մյուս սեռը, կամ ենթադրում է մի սեռի գերադաս լինելը մյուսի նկատմամբ: Կարևոր է նաև նշել, որ սեքսիստական լեզուն օգտագործվում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց կողմից:
- ▶ **Գենդերային առումով ներառական լեզուն** ընդհանուր եզրույթ է, որը նշանակում է ոչ սեքսիստական լեզվի, ներառական լեզվի և գենդերային առումով «հավասարակշռված» լեզվի կիրառում:

3. Եվրոպայի խորհրդի Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի CM/Rec(2019)1 հանձնարարական: Տե՛ս <https://www.coe.int/en/web/genderequality/combating-and-preventing-sexism>

Գենդերային առումով չեզոք լեզվի նպատակն է խուսափել այնպիսի բառերի ընտրությունից, որոնք կարող են մեկնաբանվել որպես կողմնակալ, խտրական կամ նվաստացուցիչ՝ ենթադրելով, որ մի սեռը կամ սոցիալական գենդերը նորմ է, իսկ մյուսը՝ ոչ: Օրինակ՝ բառերի օգտագործման ընտրության միջոցով: Գենդերային առումով «հավասարակշռված» և ներառական լեզվի կիրառումը նաև օգնում է նվազեցնել գենդերային կարծրատիպերը, խթանում է սոցիալական փոփոխություններ և նպաստում է գենդերային հավասարության հասնելուն:

Գենդերային հիմքով բռնություն և բռնություն կանանց նկատմամբ

- ▶ **Գենդերային հիմքով բռնություն** նշանակում է բռնություն, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով, կամ որը կանանց նկատմամբ դրսևորվում է անհամաչափորեն:
- ▶ **Կանանց նկատմամբ բռնությունը** դիտարկվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և պետք է ներառի գենդերային հիմքով բռնության այն բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, որոնք տեղի են ունենում հանրային կամ մասնավոր կյանքում:
- ▶ **Երեխա** նշանակում է 18 տարին չլրացած ցանկացած անձ:
- ▶ **Աղջիկների/երեխաների նկատմամբ բռնությունը** կարող է դրսևորվել նույնպիսի ձևերով, ինչպիսին որ կանանց նկատմամբ է, և տեղի ունենալ երեխաների համար առավել անվտանգ համարվող տեղերում՝ դպրոցում, ընտանիքում կամ գիշերօթիկ դպրոցում, այսինքն՝ այսպես կոչված, «վստահության օղակում»: Երեխաները ընտանեկան բռնությունից տուժող են, այդ թվում՝ որպես ընտանիքում բռնության ականատեսներ: Երեխաների նկատմամբ ընտանեկան բռնությունը լայն տարածում ունի, ընդ որում ուսումնասիրությունները բացահայտել են կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և երեխաների ֆիզիկական բռնության միջև կապը, ինչպես նաև տանը բռնության ականատես լինելու հետևանքով երեխաներին պատճառված վնասը:⁴

4. Տե՛ս նաև Եվրոպայի խորհրդի Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին կոնվենցիան, որը հայտնի է նաև որպես Լանգարոտի կոնվենցիա: Տե՛ս <https://www.coe.int/en/web/children/convention>

- ▶ **Չոհացում** նշանակում է, երբ որևէ մեկը մեկ այլ անձի վնաս է հասցնում կամ սպառնում է վնաս հասցնել:
- ▶ **Երկրորդային զոհացում** նշանակում է վնասակար կամ քրեական գործողության ուղղակի հետևանք չհանդիսացող զոհացում, որը պայմանավորված է տուժողի նկատմամբ հաստատությունների ներկայացուցիչների կամ անհատների արձագանքով: Երկրորդային զոհացում տեղի է ունենում այն դեպքերում, երբ տուժողի նկատմամբ հարգանքի, գաղտնիության ապահովման և արհեստավարժ մոտեցման փոխարեն վերաբերվում են որպես վստահության ոչ արժանի կամ չափազանցնող անձի: Երկրորդային զոհացումը կարող է պայմանավորված լինել իրավախախտի հետ տուժողի պարբերաբար առերեսման, նույն փաստերի վերաբերյալ կրկնակի հարցաքննության, տուժողների հետ առնչվող բոլոր անձանց կողմից ոչ պատշաճ լեզվի կիրառման կամ աննրբանկատ մեկնաբանությունների հանգամանքով:

Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ձևերը

- ▶ **Ղնտանեկան բռնություն** նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնության գործողություններ, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում:
- ▶ **Ֆիզիկական բռնություն** նշանակում է ֆիզիկական բռնության որևէ դիտավորյալ գործողություն մեկ այլ անձի նկատմամբ, այդ թվում՝ մեկ ապտակը, և անկախ այն բանից, թե որտեղ է այն տեղի ունենում:
- ▶ **Հոգեբանական բռնություն** նշանակում է գործողություններ, որոնք խաթարում են անձի հոգեբանական ամբողջականությունը հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով: Օրինակ՝ որևէ անձի կամ հարազատի (երեխաների, ընտանիքի անդամի) նկատմամբ բռնության սպառնալիքներ, նվաստացում, ընկերներից և ընտանիքի անդամներից կամ ընտանիքի անդամ չհանդիսացող որևէ մեկից մեկուսացում, կնոջը վերահսկելու կամ վնասելու համար երեխաների հաղորդակցության սահմանափակումներ, երեխաների օգտագործում և այլն:
- ▶ **Տնտեսական բռնությունը** չարաշահում է, որը ստիպում է կամ

փորձում է ստիպել անհատին ֆինանսապես կախվածություն ունենալ մեկ այլ անհատից՝ խոչընդոտելով նրա հասանելիությունը ռեսուրսներին կամ վերջինիս անկախ տնտեսական գործողությունը, կամ դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելով:

- ▶ **Սեռական բռնություն** (ներառյալ բռնաբարություն) սահմանվում է որպես ցանկացած սեռական գործողություն կամ դրա փորձ, անցանկալի սեռական մեկնաբանություն կամ առաջարկություն, կամ թրաֆիքինգի կամ այլ կերպ ուղղորդման գործողություններ, որոնք ուղղված են անձի սեռականությանը՝ հարկադրանքի կամ սպառնալիքի միջոցով, ցանկացած անձի կողմից, անկախ տուժողի հետ նրանց ունեցած կապից, ցանկացած միջավայրում, ներառյալ՝ տանը և աշխատավայրում):
- ▶ **Սեռական ոտնձգությունը** անցանկալի սեռական վարքագիծ է: Այն ներառում է այնպիսի վարքագիծ, որը կարող է անձի մոտ առաջացնել վիրավորանքի, նվաստացման կամ ահաբեկման զգացում: Սեռական ոտնձգությունը կարող է ունենալ ֆիզիկական, բանավոր կամ գրավոր դրսևորում: Սեռական ոտնձգությունը անձի արժանապատվությունը ոտնահարելու նպատակ հետապնդող կամ այն ոտնահարող սեռական բնույթի անցանկալի բանավոր, ոչ բանավոր կամ ֆիզիկական վարքագծի ցանկացած ձև է՝ ուղղված մասնավորապես ահաբեկող, թշնամական, նսեմացնող, ստորացնող կամ վիրավորական միջավայր ստեղծելուն:
- ▶ **Հղիության հարկադիր ընդհատում** նշանակում է կնոջ հղիության արհեստական ընդհատումը՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված համաձայնության:
- ▶ **Հարկադիր ամլացում** նշանակում է կնոջը բնական վերարտադրության կարողությունից զրկելու նպատակ հետապնդող կամ դրան հանգեցնող վիրահատության կատարում՝ առանց նրա կողմից նախապես և տեղեկացված համաձայնության կամ գործընթացը հասկանալու:
- ▶ **Կանանց սեռական օրգանների խեղում** (ԿՍՕԻ) ներառում է գործողություններ, որոնք կատարվում են դիտավորությամբ կանանց սեռական օրգանները փոխելու կամ վնասելու համար ոչ բժշկական նպատակներով:
- ▶ **Հարկադիր և մանկական կամ վաղ ամուսնություն.** մանկական ամուսնություն է համարվում ցանկացած ամուսնություն, երբ կողմերից ամնվազն մեկի 18 տարին չի լրացել: Հարկադիր ամուսնությունը, երբ կողմերից մեկը կամ երկու կողմն էլ անձնապես չեն արտահայտել այդ միությանն իրենց լիարժեք և ազատ համաձայնությունը: Մանկական ամուսնությունը հարկադիր

ամուսնության տեսակ է:

- ▶ **Պատվի հետ կապված բռնություն** (հանուն «պատվի» կատարվող հանցագործություններ) հատուկ հատկանիշներով բռնության ձև է: Մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չեն կարող համարվել կանանց նկատմամբ բռնության արդարացում: Բռնությունը և ճնշումները հաճախ իրականացվում են մի քանի անձանց կողմից միասին, և պարտադիր չէ, որ բռնարարը լինի ներկա կամ նախկին զուգընկերը: Նրանք կարող են լինել ծնողները, եղբայրները և քույրերը, հարազատները կամ ընտանիքի համայնքի այլ անդամներ: Պատվի հետ կապված բռնության հիմնական նպատակը կանանց սեռականության վերահսկումն է:
- ▶ **Կնասպանություն (Ֆեմիցիդ)** նշանակում է կանանց և աղջիկների սպանությունը կին լինելու պատճառով: Այն, ի թիվս այլնի, ներառում է կնոջ սպանությունը զուգընկերոջ կողմից բռնության, խոշտանգման հետևանքով և կնատյացության հողի վրա կանանց սպանությունը, հանուն այսպես կոչված պատվի կանանց և աղջիկների սպանությունը և վնասակար գործելակերպի հետ կապված այլ սպանությունները, կանանց և աղջիկների թիրախավորված սպանությունները զինված հակամարտությունների համատեքստում և ավազակախմբերի, կազմակերպված հանցավորության, թմրանյութերի վաճառքով զբաղվողների և կանանց ու աղջիկների թրաֆիքինգի հետ կապված կնասպանության դեպքերը:
- ▶ **Նախածննդյան շրջանում սեռի ընտրություն** նշանակում է կատարել հղիությունը շարունակելու կամ ընդհատելու ընտրություն՝ կախված պտղի սեռից: Սա գենդերային անհավասարության մշակույթում արմատավորված երևույթ է, որը խորացնում է կանանց նկատմամբ բռնության մթնոլորտը:
- ▶ **Կանանց նկատմամբ կիբեր/առցանց բռնություն** նշանակում է գենդերային հիմքով բռնություն, որն իրականացվում է էլեկտրոնային հաղորդակցության և ինտերնետի միջոցով: Թեև կիբերբռնությունը կարող է ազդել թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց վրա, կան կանանց և աղջիկների նկատմամբ կիբերբռնության տարբեր ձևեր, որոնցից են կիբերհետամտումը, առանց համաձայնության պոռնոգրաֆիան (կամ «պոռնովրեժիսդոլությունը»), գենդերային հիմքով վիրավորանքը, ատելության խոսքը և ոտնձգությունները, «անբարոյականության համար պարսավանքը», անցանկալի պոռնոգրաֆիան, «սեքսթորշնը», բռնաբարության և սպանության սպառնալիքները, և էլեկտրոնային միջոցներով թրաֆիքինգի խթանումը:
- ▶ **Չետամտում** նշանակում է անձի նկատմամբ մշտական

սպառնացող վարքագծի դրսևորում՝ նրա մոտ առաջացնելով վախի իր անվտանգության հետ կապված:

Լրատվամիջոցներ, գեղերային հավասարություն և բռնություն կանանց նկատմամբ

Գեղերային հավասարությունը մարդու հիմնարար իրավունք է: Գեղերային հավասարության հասկացությունը նշանակում է, որ բոլոր մարդիկ կարող են ազատ զարգացնել իրենց անձնական կարողությունները և կատարել ընտրություն՝ առանց խիստ գեղերային դերերով պայմանավորված սահմանափակումների: Դա նշանակում է, որ կանանց և տղամարդկանց տարբեր վարքագծերը, ձգտումները և կարիքները հավասարապես հաշվի են առնվում, գնահատվում են և աջակցություն են ստանում:⁵

— Գեղերային հավասարությունը ենթադրում է հավասար իրավունքներ կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների համար, ինչպես նաև երկու սեռերի հավասար տեսանելիություն, իրավագործում, պատասխանատվություն և մասնակցություն հանրային ու մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում:

— Այն նաև ենթադրում է կանանց և տղամարդկանց միջև ռեսուրսների հավասար հասանելիություն և բաշխում:⁶

— Գեղերային հավասարությունը միայն կանանց ինտիմ չէ, այլ պետք է վերաբերվի և լիարժեք կերպով ներառի ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց:

— Լրատվամիջոցները դեռ հեռու են կանանց նկատմամբ հավասարությունն ցուցաբերելու հարցում: 2015թ. Լրատվամիջոցների գլոբալ մոնիտորինգի ծրագրի (այսուհետ՝ ԼԳՄԾ) արդյունքները ցույց տվեցին, որ 2010 թվականից ի վեր լրահոսում կանանց պատկերելու և ներկայացնելու առումով որևէ բարելավում տեղի չի ունեցել: ԼԳՄԾ 2015թ. զեկույցի հեղինակները հանգել են այն եզրակացության, որ **ամբողջ աշխարհում կանայք ներկայացնում են միայն 24%-ը այն մարդկանց, որոնց կարելի էր տեսնել, ում մասին կարելի էր կարդալ կամ լսել ավանդական լրատվական մամուլում**, որը կազմում է նույն

5. Եվրոպական հանձնաժողով, 100 բառ հավասարության համար. Կանանց և տղամարդկանց միջև հավասարության վերաբերյալ եզրույթների բառարան, (1998): Տես <https://eige.europa.eu/library/resource/dedupmrg200286>

6. Եվրոպայի խորհուրդ, Գեղերային հավասարության չափանիշներ և մեխանիզմներ: Տես <https://www.coe.int/en/web/genderequality/standards-and-mechanisms>

տոկոսը, ինչ եղել է 2010 թվականին: Եվրոպայում թե՛ առցանց, թե՛ ավանդական լրատվամիջոցների համար իրավիճակը նույնն էր, ինչը ցույց է տալիս, որ կանանց թերներկայացվածությունը ավանդական լրատվամիջոցներում ներթափանցել է նաև թվային լրատվական աշխարհ:⁷

■ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ CM/Rec(2013)1 հանձնարարականը՝ կոչ անելով անդամ պետություններին աջակցել **լրատվամիջոցների՝ գենդերային հավասարությունը խթանելու ջանքերին**: Հանձնարարականը մասնավորապես խրախուսում է լրատվամիջոցներին իրականացնել ինքնակարգավորված միջոցառումներ, ընդունել վարքի/ էթիկայի և ներքին վերահսկողության կանոններ և մշակել լրատվամիջոցների լուսաբանման չափորոշիչներ, որոնք խթանում են գենդերային հավասարությունը: Այն ներկայացնում է առաջարկություններ, որոնք պետք է իրականացվեն վեց ոլորտներում

- Գենդերային հավասարության քաղաքականություն և օրենսդրություն,
- լրատվամիջոցներում գենդերային հավասարության ազգային ցուցանիշների ընդունում և կիրառում,
- տեղեկության տրամադրում և լավ գործելակերպի խթանում,
- հաշվետվողականության կապուղիներ,
- հետազոտություն և հրատարակում,
- լրատվական գրագիտություն և ակտիվ քաղաքացիություն:⁸

Կանանց նկատմամբ բռնությունը խտրականության ձև է և մարդու իրավունքների ոտնահարում: Այն լուրջ խոչընդոտ է գենդերային հավասարության հասնելու համար: Մարդու իրավունքների պաշտպանության բոլոր միջազգային փաստաթղթերում կանանց նկատմամբ բռնությունը ճանաչվել է որպես կանանց մարդու իրավունքների համակարգային խախտում: Ինչպես Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, այնպես էլ Հայաստանի կողմից 1993 թվականին վավերացված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին

7. Եվրոպայի խորհուրդ, Գենդերային հավասարություն և լրատվամիջոցներ Գենդերային հավասարության հանձնաժողովի լրատվության և տեղեկատվական հասարակության կոմիտեի ղեկավար հանձնաժողովի վերլուծական զեկույց, 2020թ. հուլիս: Տե՛ս <https://rm.coe.int/prems-064620-gbr-2573-gender-equality-in-media/16809f0342>

8. Եվրոպայի խորհուրդ, Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ CM/Rec(2013)1 հանձնարարական: Տե՛ս https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805c7c7e

Կոնվենցիան (այսուհետ՝ CEDAW),⁹ սահմանելով կանանց նկատմամբ բռնության դադարեցման միջազգային և եվրոպական չափանիշներ, նշում է, որ գենդերային հիմքով բռնությունը կատարվում է կանանց նկատմամբ՝ ելնելով նրանից, որ նրանք կանայք են, և այն անհամաչափ է ազդում կանանց վրա:

Կանանց նկատմամբ բռնությունը գլոբալ երևույթ է: Աշխարհում չկա որևէ տարածաշրջան, երկիր և մշակույթ, որտեղ ապահովված է կանանց ազատությունը բռնությունից:

Գոյություն ունեն կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևեր՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բռնություն: Որոշ ձևեր, ինչպես միջազգային թրաֆիքինգը և աշխատանքային ներգաղթյալների նկատմամբ բռնությունը, հատում են պետական սահմանները: Նոր տեխնոլոգիաները ծնունդ են տալիս բռնության նոր դրսևորումների, ինչպես օրինակ՝ առցանց հետամտումը: Կանայք բռնության են ենթարկվում բազմաթիվ շրջանակներում, այդ թվում՝ ընտանիքում, համայնքում, պետական խնամակալության ներքո, ինչպես նաև զինված հակամարտությունների ընթացքում և դրանց հետևանքով: Բռնությունը շարունակական երևույթ է կանանց ամբողջ կյանքի ընթացքում՝ նախածննդյան շրջանից մինչև ծերություն: Դա վերաբերում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր կյանքի ոլորտներին: Ամբողջ աշխարհում կանանց նկատմամբ բռնության առավել տարածված ձևը **ընտանեկան բռնությունն է**, որը երբեմն հանգեցնում է մահվան: Այն ընդգրկում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողություններ, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև:

Հաշվարկվել է, որ ամբողջ աշխարհի կանանց 35 տոկոսը ենթարկվել է ֆիզիկական և/ կամ սեռական բռնության:¹⁰ Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ուսումնասիրությունը¹¹ ցույց է տվել, որ երբևէ զուգընկեր կանանց 45.9%-ը հայտնել է, որ իրենք ենթարկվել են հոգեբանական բռնության տղամարդ ինտիմ զուգընկերոջ կողմից,

9. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1979թ. : Տե՛ս <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CEDAW.aspx>

10. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Վերարտադրողական առողջության և հետազոտությունների վարչություն, Լոնդոնի հիգիենայի և արևադարձային բժշկության դպրոց, Հարավաֆրիկյան Հանրապետության բժշկական հետազոտությունների խորհուրդ, 2013թ.:

11. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում. սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ զեկույց, Երևան, ՄԱԲՀ, 2016թ.:

կանանց 21.3%-ը նշել է, որ իրենք տնտեսական, իսկ 12.5%-ը տղամարդ ինտիմ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության են ենթարկվել:

Այդուհանդերձ, ուսումնասիրության տարակասված եզրակացություններից մեկն այն էր, որ Հայաստանում կանայք հաճախ չեն հայտնում ֆիզիկական բռնության մասին՝ առերես հարցազրույցներում կանայք ավելի հազվադեպ են հայտնում տղամարդ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության մասին (12.5%), քան անանուն ինքնուրույն լրացվող հարցաթերթիկներում (22.4%):

2017 թվականին Լրագրողների միջազգային ֆեդերացիայի կողմից անցկացրած հարցումը ցույց է տվել, որ յուրաքանչյուր երկու կին լրագրողներից մեկը աշխատանքի ընթացքում բռնության է ենթարկվել, այդ թվում՝ առցանց բռնության, վերբալ/ խոսքային բռնության, հոգեբանական բռնության և սեռական ոտնձգության:¹²

Կանանց նկատմամբ բռնությունը որպես գենդերային անհավասարության հետ կապված համակարգային երևույթ ընկալելը կարևոր է, քանի որ դա բացատրում է բռնության տարբեր ձևերի միջև եղած կապը: Կանանց նկատմամբ բռնությունն ակնհայտորեն կապված է մեր հասարակություններում առկա ընդհանուր սեքսիզմի հետ, որը զուգորդված է կանանց նկատմամբ բռնության այնպիսի խորհրդանշական ձևերի հետ, ինչպիսիք են՝ կանանց աղքատությունը, կանանց տնտեսական կախվածությունը, կանանց և տղամարդկանց վարձատրման տարբերությունը, կանանց անհավասար մասնակցությունը քաղաքական կյանքում և պարիտետային ժողովրդավարության բացակայությունը, կանանց համար հանրային ծառայությունների և ընդհանուր բարիքների (այդ թվում՝ առողջապահության, կրթության, մշակույթի, տրանսպորտի, բնակարանի, լրատվության և այլ ոլորտներում) անհավասար հասանելիությունը:

Լրատվամիջոցների և բռնության կանխարգելման միջև գոյություն ունի կապ լրատվամիջոցների կողմից կանանց նկատմամբ բռնությունը համատեքստից կտրված ներկայացնելը կարող է խորացնել գենդերային կարծրատիպերը, որոնք արմատավորում են գենդերային հիմքով բռնությունը: Կանանց անլիարժեքության և տղամարդկանց գերակայության վերաբերյալ գաղափարները անդրադառնում են

12.Լրագրողների միջազգային ֆեդերացիա, 2017թ : Տե՛ս <https://www.ifj.org/media-centre/news/detail/category/press-releases/article/ifj-survey-one-in-two-women-journalists-suffer-gender-based-violence-at-work.html>

վարքագծի վրա և արդարացնում տղամարդկանց կողմից բռնության՝ որպես վերահսկողության ձևի կիրառումը:¹³



Լրատվամիջոցները կարող են նորմալիզացնել կանանց նկատմամբ բռնությանը և նպաստել բռնությունը հանդուրժելու մշակույթին, եթե դրանք՝

- յուրաքանչյուր պատմություն ներկայացնեն որպես առանձին մի պատմություն և եզակի բնույթ կրող,
- սենսացիոն ձևով ներկայացնեն իրադարձություններն ու հանցագործությունները, օրինակ՝ բռնաբարությունը (խուսափեք «սեքսուալ սկանդալ» կամ «հակասություն» և այլ նման բառեր օգտագործելուց),
- ակնարկեն, որ գեղեցիկի հիմքով բռնությունը հավասար դիրքերում գտնվող անձանց զուտ բարդ և խառը հարաբերությունների արդյունք է,
- նվազեցնեն հանցագործի գործողությունների ծանրությունը, և մեղքը բարդեն տուժողի և այլոց վրա:



Լրատվամիջոցները պետք է՝

- ներկայացնեն բռնության պատճառների խորքային վերլուծություն և ցույց տան այն որպես համակարգային խնդիր,
- խուսափեն իրադարձությունների կողմնակալ մեկնաբանումից և լինեն չեզոք,
- ներկայացնեն կանանց նկատմամբ բռնությունը որպես մեկ անձի կողմից մյուսի նկատմամբ իշխանության և վերահսկողության արտահայտում,
- բարձրացնեն իրազեկվածությունը կանանց նկատմամբ բռնության հանցավոր բնույթի, բռնարարների պատասխանատվության և բռնության ենթարկվածներին մատուցվող աջակցության վերաբերյալ:

Լրատվամիջոցները կարող են նպաստել սոցիալական փոփոխությանը՝ խթանելով կանանց նկատմամբ բռնության գրոյական հանդուրժողականություն՝ ներկայացնելով կանանց և տղամարդկանց բալանսավորված պատկերներ և բարձրացնելով իրազեկվածությունը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին, ինչպես նաև այն ուղիների, որոնց միջոցով հասարակության տարբեր հատվածները կարող կանխել բռնությունը և աջակցել տուժողներին:

13.Եվրոպայի խորհուրդ, Մասնավոր հատվածի և լրատվամիջոցների մասնակցությունը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանը խրախուսելը. Ստամբուլի կոնվենցիայի 17-րդ հոդված, 2016 թվականի հունվար: Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016805970bd>

CM/Rec(2013)1 հանձնարարականը խրախուսում է անդամ պետություններին «ընդունել համապատասխան իրավական շրջանակ, որը կոչված է ապահովել լրատվամիջոցներում մարդու արժանապատվությունը հարգելու սկզբունքը և սեռի հիմքով բոլոր խտրականությունների, ինչպես նաև ատելության դրդման և գենդերային հիմքով բռնության ցանկացած ձևի արգելքը»:

Հեռանկարային գործելակերպ. Իսպանիա¹⁴

Իսպանիայի ռադիոյի և հեռուստատեսության կորպորացիայի Իրավահավասարության դիտարանը (այսուհետ՝ CRTVE) ստեղծվել է լիարժեք հավասարության ուղղությամբ առաջընթաց ապահովելու, ինչպես նաև սեռի հիմքով խտրականության և դրա վատագույն դրսևորումներից մեկի՝ գենդերային հիմքով բռնության դեմ պայքարելու համար: Դիտարանի նպատակներն են.

- Նպաստել կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի հարգմանը, իմացությանը և հասարակայնացմանը՝ ձգտելով խուսափել CRTVE կորպորացիայի գործունեությունում ցանկացած ձևի անհավասարությունից և սեռով պայմանավորված խտրականությունից:
- Խրախուսել ներկայացնելու երկու սեռերի միջև հավասարության, բազմակարծության և հավասարակշռության պատկերը՝ առանց սեքսիստական կարծրատիպերի կամ գեղեցկության չափանիշների, և կանանց ակտիվ մասնակցությունը տարբեր գործառույթներին կյանքի բոլոր բնագավառներում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով երեխաներին և մանկական լսարանին ուղղված ծրագրերի բովանդակությանը:
- Վերահսկել CRTVE-ի գործունեության մեջ էթիկայի կանոնների առկայությունն ու կիրառումը՝ ի նպաստ հավասարության խթանման և գենդերային բռնության կանխարգելման:
- Ապահովել, որ CRTVE-ի որևի լրատվամիջոցի հեռարձակված նյութի բովանդակությունը չի արդարացնում, պարզունակացնում կամ հրահարում կանանց նկատմամբ բռնությունը:
- Խրախուսել ոչ սեքսիստական լեզվի օգտագործումը:
- Համագործակցել կանանց և տղամարդկանց հավասարության խթանմանը և գենդերային բռնության արմատախիլ անելուն:

14. Հեռանկարային գործելակերպի օրինակ Եվրախորհրդարանի հրատարակումից. Գենդերային հավասարության հանձնաժողովի լրատվության և տեղեկատվական հասարակության կոմիտեի ղեկավար հանձնաժողովի վերլուծական զեկույց, 2020թ. հուլիս, էջ 35: Տե՛ս <https://rm.coe.int/prems-064620-gbr-2573-gender-equality-in-media/16809f0342>

ուղղված ինստիտուցիոնալ արշավներում:

2018 թվականին CRTVE-ն նաև ստեղծեց «հավասարության խմբագրի» պաշտոն, որի առաքելությունն է երաշխավորել հանրային հեռուստատեսությունը և ռադիոյում կանանց և տղամարդկանց հավասարությունը՝ ինչպես բովանդակության, այնպես էլ ներկայացվածության առումով: Որոշ հանրային թերթեր (թղթային և թվային), մասնավորապես՝ eldiario.es-ը կամ El Pa s-ը, նույնպես նշանակել են նմանատիպ խմբագրերի:

Ինչպե՞ս խուսափել գենդերային կարծրատիպերից

- Կանանց նկարագրելիս մի նշեք ֆիզիկական, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակ և այլնի մասին տեղեկություններ, եթե դրանք կարևոր չեն տվյալ պատմության պարագայում: Ներկայացրեք կնոջն իր կոչումով, անվամբ և ձայնով (սա որևէ մեկի «կինը, աղջիկը և այլն չէ»):
- «Փորձագետներ» կամ վկաներ ընտրելիս ապահովեք գենդերային հավասարակշռություն : Ամրապնդեք գենդերային հավասարակշռված պատմությունները՝ նախապատրաստելով խոսելու ցանկություն ունեցող և հասանելի կանանց ցուցակներ:
- Խուսափեք ներկայացնել կանանց միայն տան, ընտանիքի, տնային/ մասնավոր տիրույթի և դերերի հետ կապված, խուսափեք որևէ նկարագրություններից, որոնք խրախուսում են կանանց նկատմամբ սահմանափակող բնույթի հասարակական ակնկալիքները («վեց երեխայի մայր», «պառաված օրհորդ») կամ որևէ այլ կերպ պարզունակացնում (օրինակ՝ «կին» բառի փոխարեն օգտագործելով «աղջիկ» բառը), ցածրացնում, նսեմացնում կամ շահագործում են կանանց, օրինակ՝ կանանց ապրանքայնացումը, կանանց ներկայացումը տղամարդկանցից կամ ընտանիքից կախյալ դերերում, սպանությունը որպես «ընտանեկան դրամա» ներկայացնելը, բռնաբարոդին որպես «սեռական հանցագործ» նկարագրելը:
- Խուսափեք կանանց «օրհորդ» բառով դիմելուց՝ կնոջ ամուսնական կարգավիճակն ընդգծելու համար, անկախ նրանից, կինն

ամուսնացած է, թե ոչ, փոխարենը թե՛ «օրիորդ» թե՛ «տիկին»-ի համար օգտագործեք «տիկին» դիմելաձևը, քանի որ այն չի տարբերակում կանանց՝ ըստ ընտանեկան կարգավիճակի: Այս պարագայում գործում է այն նույն սկզբունքը, ինչ «պարոն»-ի դեպքում, որը չի մատնանշում տղամարդու ամուսնական կարգավիճակը:

- Ձգտեք երկու սեռերի ներկայացուցիչներին ներկայացնել որպես լիարժեք մարդ արարած և զգույշ եղեք գենդերային դերեր վերագրելուց, որոնք խրախուսում են կողմնակալությունը և ամրապնդում վնասակար կարծրատիպերը: Խուսափեք անիմաստ վերափոխիչներ օգտագործելուց, օրինակ՝ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ «աղջիկ», «կին», «իգական սեռի ներկայացուցիչ» կամ «ուհի» վերջածանցը՝ որպես իրենց աշխատանքը նկարագրող ածականներ, օրինակ՝ «մատուցողուհի», «կին վարորդ», «աշխատակցուհի», «ընդունարանի աշխատակցուհի», «քարտուղարուհի», «կին գրող» և այլն բնույթով սեքսիստական են, քանի որ ենթադրում են, որ կնոջ համար գրող լինելը արտասովոր է: Դրանք ցածրացնում են անձի մասնագիտական փորձը՝ ուշադրությունը շեղելով նրա սեռի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ դա համապատասխանում է կամ կարևոր է շեշտել հաղորդակցության մեջ կամ այդ համատեքստում:
- «Ուհի» վերջածանցի ավելացումը, որը նվազեցնում է կանանց դերը կամ խորացնում է այն գաղափարը, որ ընդհանուր գոյականները որպես կանոն տղամարդկանց են մատնանշում: Ընդհանուր գոյականներն, ըստ իրենց ծագման, պետք է օգտագործվեն երկու սեռերի համար, օրինակ՝ «աշակերտ», «ուսանող», «ուսուցիչ», «բժիշկ», «քարտուղար» և այլն, քանի որ լրացուցիչ վերջածանցների ավելացման կարիք չունեն, բացառությամբ, երբ սեռը նշելը կամ սեռը տեսանելի դարձնելը համապատասխանում է կամ կարևոր է հաղորդակցության համատեքստում:
- Խուսափեք այնպիսի բառերի և բառակապակցությունների օգտագործումից, որոնք արմատավորում և խորացնում են գենդերային կարծրատիպերը. այն, թե ինչպես պետք է կանայք մտածեն, գործեն, նայեն կամ վարվեն, օրինակ՝ «կանացի երջանկություն», «կնոջ ինտուիցիա», «թույլ սեռ», «կնոջ մասնագիտություն», «կնոջ/ մոր պարտականություն», «կնոջ մայրական բնագոյ» և այլն:
- Խուսափեք սեռի մասին մեկ այլ ենթադրություն կատարող բառերի և արտահայտությունների օգտագործումից, օրինակ՝ «բոլոր հյուրերը/ բանախոսները/ տնօրենները/ դեսպանները/ քաղաքական առաջնորդները և այլն, և նրանց կանայք հրավիրվել էին...»: Նման արտահայտությունները ենթադրում են, որ բոլոր

հյուրերը/ բանախոսները/ տնօրենները/ դեսպանները/ քաղաքական առաջնորդները և այլն տղամարդիկ են: Փոխարենը շարունակե՞ք օգտագործել գենդերայի առումով ներառական լեզու, և վերոնշյալ դեպքում «կանայք» բառի փոխարեն օգտագործե՞ք «ամուսիններ» բառը, որը հավասարապես վերաբերվում է երկու սեռերին:

- Խուսափե՞ք կանանց դատելուց, օրինակ՝ «կարիերիայի ձգտող կին»:
- Խուսափե՞ք լրատվամիջոցներում և հեռուստառադիոհաղորդումներում կանանց և աղջիկներին սեռականացնելուց: Մի պատկերե՞ք աղջիկներին և կանանց որպես սեռական օբյեկտներ, որոնք կրում են բաց հագուստ և ենթադրում են սեռական պատրաստակամություն:
- Ապահովե՞ք գենդերային հավասարության շուրջ իրազեկվածության բարձրացմանը նպաստող լուսաբանում:
- Հարգե՞ք կանանց և տղամարդկանց արժանապատվությունը և իրավունքները: Խթանե՞ք հավասար հնարավորություններ տղամարդկանց և կանանց համար:
- Պատկերե՞ք կանանց և տղամարդկանց ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական դերերի լայն տիրույթ վարձատրվող աշխատանքի, սոցիալական, ընտանեկան և ժամանցային գործունեության ոլորտներում: Կանայք և տղամարդիկ պետք է հավասարապես ընկալվեն որպես ընտանիքին աջակցելու որոշումներ կայացնողներ, ընտանեկան պարտականություններ կատարողներ և երեխաների մասին հոգ տանողներ:
- Պատկերե՞ք հասարակության բազմազանությունը՝ արտացոլելով տարբեր տարիքի, կարողություններով, արտաքինով, զբաղմունք ունեցող և ընտանեկան կարգավիճակով կանանց և տղամարդկանց:
- Մի ներկայացրե՞ք այնպիսի նկարներ և հաղորդումներ կամ խթանե՞ք դրանց տարածմանը, որոնք տղամարդկանց կանանցից ավելի հզոր են ներկայացնում: Լրատվամիջոցները չպետք է ի ցույց դնեն կանանց որոշակի դերեր, մասնավորապես՝ տնային տնտեսուհու և սեռական դերերը, և չպետք է կանանց հնազանդ պատկերեն:
- Տղամարդիկ և կանայք պետք է պատկերվեն թե՛ հանրային և թե՛ մասնավոր տիրույթներում: Կանայք պետք է ավելի շատ հայտնվեն Էկրանին և չպետք է ներկայցվեն սահմանափակ դերերում: Էկրաններին պետք է հայտնվեն մի կողմից նաև կանանց մտածելու և մյուս կողմից տղամարդկանց հոգ տանելու ունակությունները:
- Կիրառե՞ք գենդերային առումով ներառական և ոչ սեքսիստական լեզու: Սեքսիստական լեզուն արտացոլում է այն գաղափարը, որ մի սեռը գերադաս է մյուսի նկատմամբ: Այդպիսի լեզուն նպաստում, խթանում կամ հանգեցնում է սեռերից մեկի ճնշմանը և շահարկում

սեռերի միջև անարդարացի տարբերակում: Օգտագործեք «բուժակ» բառը՝ «բուժքույր» և «բուժեղբայր» բառերի փոխարեն, «բժիշկ» բառը (որը հավասարապես վերաբերում է երկու սեռերին)՝ «բժշկուհի» բառի փոխարեն, «լրագրող» բառը (որը հավասարապես վերաբերում է երկու սեռերին)՝ «լրագրողուհի» բառի փոխարեն, «հաղորդավար» բառը (որը հավասարապես վերաբերում է երկու սեռերին)՝ «հաղորդավարուհի» բառի փոխարեն, «աշխատակից» բառը (որը հավասարապես վերաբերում է երկու սեռերին)՝ «աշխատակցուհի» բառի փոխարեն:

- Կարևոր է նշել, որ սեքսիստական գաղափարները և վնասակար կարծրատիպերը արմատավորվում են ոչ միայն առանձին բառերի, այլ նաև իրավիճակային և համատեքստային կիրառումների միջոցով, ուստի հավասարապես կարևոր է ոչ միայն մեկ բառի կամ արտահայտության վրա կենտրոնանալը, այլ նաև դիսկուրսներն ու պրակտիկաները քննելն ու վերլուծելը, որտեղ ամփոփված են և/ կամ դրսևորվում են սեքսիստական ենթադրություններ և արտահայտություններ:

Կանանց նկատմամբ բռնության լուսաբանումը

Կանանց նկատմամբ բռնության լուսաբանումը պահանջում է թեմայի վերաբերյալ նրբանկատ մոտեցում, իրավական շրջանակի, համատեքստի և փաստերի մասին իրազեկում, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության եզրույթների իմացություն:

Համատեքստ/լուսաբանում

- Լուսաբանեք կանանց նկատմամբ բռնության և կանանց մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը առանց սենսացիաների (ձևակերպումների կամ պատկերումների):
- Դիտարկեք կանանց նկատմամբ բռնությունը որպես մարդու իրավունքների ոտնահարման և խտրականության ձև՝ համաձայն միջազգայնորեն ընդունված սահմանման (տես Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան,¹⁵

15. Տես <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210>

Կանանց նկատմամբ բռնության վերացման ՄԱԿ-ի 1993 թվականի հռչակագիրը):¹⁶

- Բացատրեք համատեքստը, օգտագործեք վիճակագրություն, ինֆոգրաֆիկան հարցազրույց վերցրեք փորձագետներից, նպաստեք առավել խորն ընկալմանը՝ տրամադրելով համապատասխան համատեքստային տեղեկություններ փորձագետների կողմից, որոնք ծանոթ են կանանց նկատմամբ բռնության համատեքստին և/ կամ աշխատում են բռնության ենթարկված կանանց հետ:
- Պայթարեք կանանց նկատմամբ բռնության մասին առասպելների դեմ, օրինակ՝ ներկայացրեք կնոջ սպանությունը որպես սպանություն, այլ ոչ թե՝ «կրթի հողի վրա կատարված հանցագործություն», մի վկայակոչեք կրոնը, մշակույթը կամ ավանդույթը կանանց նկատմամբ բռնության մեղադրանքի հիմքում:
- Օգտագործեք այնպիսի ձևակերպումներ, որոնք բռնության պատասխանատվությունը դնում են հանցագործի վրա, օրինակ՝ «նա բռնաբարեց նրան», այլ ոչ թե «նրա բռնաբարությունը» կամ «նրան բռնաբարել են»:
- Առաջարկեք լուծումներ, բացատրեք, թե ինչ ծառայություններ են հասանելի, օրինակ՝ անվճար իրավաբանական օգնություն, պաշտպանություն ապահովող հրահանգներ, ապաստաններ, թեժ գծեր:
- Պատկերեք բռնարարներին որպես «սովորական» տղամարդիկ (այլ ոչ որպես «հրեշներ») կամ հոգեբանորեն անկայուն), որոնք պետք է պատասխանատվություն կրեն իրենց գործողությունների/ հանցագործությունների համար և քրեորեն հետապնդվեն ու պատժվեն:

Հարցազրույցներ

- Խնդրեք տեղեկացված համաձայնություն տրամադրել՝ հարցազրույցի մասնակցության կամ պատմության/հաղորդման մեջ պատկերման համար: Լիարժեք բացատրեք հայցվող տեղեկությունների օգտագործման նպատակը՝ հարցազրույց տվող անձի անվտանգությունն ապահովելու համար: Տեղեկատվություն տրամադրեք հարցազրույցի տարածման մասին (օրինակ՝ ինտերնետով): Հարցազրույց տվողը պետք է կարողանա ընկալել իր մասնակցության հետևանքները:
- Բռնության ենթարկված կամ բռնություն կատարած անձանց պատմությունները ներկայացնելիս, ուսումնասիրելիս կամ խոսքը

¹⁶ Տե՛ս <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/violenceagainstwomen.aspx>

մեջբերելիս պետք է պաշտպանվի նրանց գաղտնիությունը, և դա պետք է հիմնված լինի լրագրողական էթիկայի՝ չվնասելու սկզբունքի վրա: Հիշեք այլոց կյանքի վրա լրատվական հրապարակման կամ հեռարձակման (բառերի և պատկերների) հնարավոր ազդեցության մասին:

- Միօգտագործեք իրական անուններ, եթե մարդիկ նույնականացվելու հատուկ համաձայնություն չեն տվել:
- Խուսափեք դատապարտող լեզվից: Բռնության ենթարկված անձի պատմության, նրա սեռական կյանքի, հագուկապի, գտնվելու վայրի, կատարած գործողության կամ բռնության տեղի ունենալու ժամի մասին գրելը կարող է ենթադրել բռնության ենթարկվածի մեղավորություն: Բռնությունից տուժածին մեղադրելը վերաբերում է բռնության և տեղի ունեցած բացասական իրադարձությունների պատասխանատվությունը նրա վրա բարդելու միտմանը: Դա հատկապես հավանական է սեռական բռնության դեպքում, երբ մեղավորությունը փորձում են փնտրել հագուստի կամ հանցագործության վայրի համատեքստում (ինչու՞ էր նա կարճ կիսաշրջագգեստ հագել, ինչու՞ էր միայնակ զբոսնում): Բռնության համար միշտ և բացառապես պատասխանատու է բռնարարը: Այն երբեք տեղի չի ունենում տուժողի մեղքով կամ նրա կողմից հրահրվելու պատճառով: Բացի այդ, կանանց նկատմամբ բռնությունը չպետք է ներկայացվի որպես մշակույթի, ավանդույթի, կրոնի և այլնի «բնականոն» տարր: Մշակույթը, սովորույթը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չպետք է դիտարկվի որպես կանանց նկատմամբ բռնության որևէ ձևի արդարացում:
- Մի հաղորդեք մանրամասներ (անուններ, անձնական կամ աշխատանքային հասցե, պաշտոն, երեխաների դպրոցի մասին կամ տուժածին և նրա ընտանիքի անդամներին նույնականացնող այլ բնույթի տեղեկություններ), որոնք կարող են հետագա ռիսկի ենթարկել բռնության ենթարկվածներին:
- Երաշխավորեք անվտանգ, ապահով և գաղտնի միջավայր՝ հարցազրույց կազմակերպելիս հարցրեք, թե որտեղ է տուժողն իրեն ապահով և անվտանգ զգում՝ հարցազրույցին մասնակցելու համար: Ստուգեք, արդյոք հարցազրույցի մասնակցին հարկավոր է որևէ հատուկ հարմարություն, օրինակ՝ անվասայլակի մուտք: Խուսափեք այնպիսի վայրերից, որտեղ ինչ-որ մեկը կարող է լսել կամ ընդհատել հարցազրույցը: Ապահովեք, որ հարցազրույցները չափազանց երկար կամ հուզականորեն հոգնեցուցիչ չլինեն: Լրացուցիչ ժամանակ տրամադրեք հարցազրույցն անցկացնելու համար, մի շտապեք: Լրագրողները և լրատվական ոլորտի բոլոր

մասնագետները պետք է անեն հնարավոր ամեն ինչ՝ հարցազրույց տվողին հետագա չարաշահման/բռնության չենթարկելու համար:

- Խուսափեք ձեր կարծիքը հայտնելուց և/կամ խորհուրդ տալուց (օրինակ՝ «Եթե ես ձեր տեղը լինեի, այդ ժամին երբեք դուրս չեի գա»):
- Խուսափեք անձնական բնույթի հարցեր տալուց տուժողի մասնավոր/ ինտիմ կյանքի և բռնի գործողության մանրամասների վերաբերյալ, օրինակ՝ այնպիսի հարցեր, թե «կոնկրետ ինչպես է տեղի ունեցել հեշտոցային ներթափանցումը», բացարձակապես արգելված են: Հիշեք՝ դուք լրագրող եք, այլ ոչ թե ոստիկան կամ դատավոր:
- Խուսափեք երկրորդային գոհացումից՝ տուժողի նկատմամբ դրսևորելով հարգանքի, գաղտնիության ապահովման և արհեստավարժ մոտեցում, ինչպես նաև խուսափեք տուժողի կյանքի որակը կամ հասարակության մեջ նրա դիրքը խաթարող բառերից/ պատկերներից/ գործողություններից:
- Հնարավորություն տվեք բռնության ենթարկված անձին ցանկության դեպքում դադարեցնել հարցազրույցը: Լրագրողները և լրատվական ոլորտի այլ մասնագետները հարցազրույց տվողներին պետք է տրամադրեն կոնտակտային տվյալներ և միշտ հասանելի լինեն նրանց համար: Դա կերաշխավորի, որ հարցազրույց տվողները ցանկության դեպքում կարող են կապ պահպանել:
- Բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցողից հարցազրույց վերցնելիս օգտագործեք վերոնշյալ մոտեցումները: Խոսեք սովորական ձևով, ուշադիր լսեք և կրկնեք, եթե ինչ-որ բան պարզ չէ: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ժամանակ տրամադրեք:

Լուսանկարներ

- Չգուշորեն օգտագործեք պատկերները, կադրերը և լուսանկարները կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ նյութեր պատրաստելիս:
- Խնդրեք բռնության ենթարկված անձանց տրամադրել տեղեկացված համաձայնություն՝ իրենց լուսանկարների կամ ցանկացած այլ պատկերների հրապարակման համար:
- Պատկերների ցանկացած օգտագործման դեպքում սուբյեկտը պետք է ներկայացվի՝ հաշվի առնելով նրա արժանապատվության պաշտպանությունը: Պատկերները հնարավորինս պետք է օգտագործվեն ընդհանուր իրավիճակը ներկայացնելու, այլ ոչ թե կանանց նկատմամբ բռնության կոնկրետ դեպքը ցուցադրելու

համար:

- Խորհուրդ չի տրվում լուսանկարել բռնության ենթարկվածներին: Այդուհանդերձ, լուսանկարներ անելու դեպքում կարևոր է բռնության ենթարկվածներից ստանալ գրավոր համաձայնություն և կապ պահպանել լուսանկարիչների հետ՝ պատկերներն ուսումնասիրելու և ընտրելու, ցանկացած տեղեկություն հստակեցնելու և դրանց հնարավոր օգտագործումը քննարկելու նպատակով:
- Երբեք չի կարելի օգտագործել բռնության ենթարկված երեխաների լուսանկարներ: Սա վերաբերում է (ընտանեկան) բռնության հետ կապված ընտանիքների բոլոր երեխաներին:

Հատուկ ուղեցույցներ

- **Սեռական բռնության լուսաբանման** համար անհրաժեշտ է հատուկ զգուշություն և էթիկական մեծ նրբանկատություն: Այն պահանջում է հարցազրույցներ վարելու մասնագիտական հմտություններ, օրենքի ընկալում և տրավմայի հոգեբանական ազդեցության մասին բազային գիտելիքներ:
- **Երեխաների վերաբերյալ լուսաբանման** համար անհրաժեշտ է արհեստավարժ մոտեցում և երեխաների իրավունքների վերաբերյալ առավել խորը գիտելիքներ: Այն պահանջում է յուրաքանչյուր երեխայի արժանապատվության և իրավունքների նկատմամբ հարգանք՝ հատուկ ուշադրություն դարձնելով մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը և գաղտնիությանը, և յուրաքանչյուր երեխայի լավագույն շահերի պաշտպանություն:¹⁷

17. Տես օրինակ՝ ՅՈՒՆԻՍԵՖԻ Ուղեցույցները երեխաների լուսաբանման վերաբերյալ՝ <https://www.unicef.org/eca/media/ethical-guidelines>

Ներպետական իրավական շրջանակ և համատեքստ

Լինելով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայի խորհրդի անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մարդու իրավունքների մի քանի կոնվենցիաներ և ստանձնել է կանանց և տղամարդկանց պատմականորեն արմատացած անհավասարությունը արմատախիլ անելու և կանանց իրավունքները պաշտպանելու պարտավորությունը: Այդ կոնվենցիաների շարքում են Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որին Հայաստանը միացել է 1993 թվականին,¹⁸ 2002 թվականին վավերացված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա)¹⁹ և 2004 թվականին վավերացված Եվրոպական սոցիալական խարտիան (վերանայված):²⁰

Օրենքի առջև հավասարությունը և խտրականության արգելքը նաև ամրագրված են Հայաստանի Սահմանադրության մեջ: Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Կարևորելով տղամարդկանց և կանանց հավասարություն՝ այս սկզբունքը հատուկ ամրագրվել է Սահմանադրության 30-րդ հոդվածում՝ կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Ավելին, Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն, կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը սահմանվել է որպես պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Գենդերային հավասարության երաշխիքները նախատեսված են նաև 2013 թվականին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար

18. Տե՛ս <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CEDAW.aspx>

19. Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/search-on-states/-/conventions/treaty/005>

20. Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/163>

հնարավորությունների մասին» ՀՀ օրենքում: Սակայն, այս օրենքի կիրառման գործընթացները դանդաղ են ընթանում:

■ 2017 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք):

■ Օրենքը սահմանում է պարտավորություններ և միջոցառումներ՝ պաշտպանել ընտանիքում բռնության ենթարկված անձանց կրկնվող բռնության վտանգից անհետաձգելի միջամտության որոշումների և պաշտպանական որոշումների միջոցով, աջակցություն և օգնություն ցուցաբերել ընտանեկան բռնության ենթարկված անձանց, այդ թվում՝ անվճար և անհրաժեշտ հոգեբանական և իրավական օգնություն, աշխատանք գտնելու և սոցիալական օգնություն ստանալու գծով աջակցություն և այլ անհրաժեշտ ծառայություններ: Օրենքի համաձայն՝ պետության լիազոր մարմինը նաև պարտավոր է կազմակերպել ընտանեկան բռնության վերաբերյալ վերապատրաստումներ պետական մարմինների աշխատակիցների համար, ուսումնասիրել ընտանեկան բռնության հիմնական պատճառները, պայմաններն ու հետևանքները և մշակել դրանց հաղթահարմանն ուղղված ծրագրեր:

Օրենքի 2-րդ գլխում սահմանվում են ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները: Դրանք են՝

1. նախազգուշացումը
2. անհետաձգելի միջամտության որոշումը
3. պաշտպանական որոշումը

■ Ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը արձագանքելու հիմնական տարրն է, և այն պետք է իրականացվի պատշաճ և արդյունավետ՝ կանխարգելմանը, ծառայությունների մատուցման օժանդակմանը և քրեական հետապնդմանը զուգահեռ: Ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանելու և նրանց անվտանգությունը երաշխավորելու ամենաարդյունավետ միջոցը անմիջական վտանգի պայմաններում՝ տուժողի և հանցագործի միջև ֆիզիկական հեռավորության ապահովումն է:²¹

21. Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի բացատրական զեկույցի 264-րդ կետ:

Պաշտպանական միջոցները կիրառվում են ընտանեկան բռնության ենթարկված անձին պաշտպանելու համար, երբ կա բռնության կրկնության վտանգ, և դրանք չեն խոչընդոտի անհրաժեշտության դեպքում Օրենքին համապատասխան քրեական գործ հարուցելուն: Առաջին երկու միջոցները կիրառվում են ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների, իսկ երրորդը՝ դատարանի կողմից:

■ Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանիքում բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ առերևույթ չի պարունակում, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն (տե՛ս ստորև):

■ Եթե առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ոստիկանության իրավասու ծառայողը կարող է կայացնել անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ: Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Այդ ժամանակահատվածում կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները՝ հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից (սույնիսկ եթե հանցագործը այդ բնակության տարածքի սեփականատերն է), արգելել տեսակցությունը բռնության ենթարկված անձի հետ, վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը և այլն:

■ Ընտանեկան բռնության ենթարկված անձը կարող է դիմել նաև ավելի երկար ժամկետով պաշտպանական որոշման համար: Պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դատարանի որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով: Եթե ընտանիքում բռնության ենթարկվածն անչափահաս կամ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձ է, ապա պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել նրա մերձավոր ազգականները, օրինական ներկայացուցիչը

և խնամակալության ու հոգաբարձության մարմինը կամ նրանց համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը:

■ Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները՝ հարկադրել ընտանիքում բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության վայրից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը, արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել ընտանիքում բռնության ենթարկվածի աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր (որոնք այցելում է բռնության ենթարկված անձը), սահմանվում է բռնության ենթարկված անձին մոտենալու հեռավորությունը, անհրաժեշտության դեպքում արգելվում են երեխաների հետ տեսակցությունները, շփումը երեխաների հետ, ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դրվում է ռեաբիլիտացիոն ծրագիր անցնելու պարտականություն:

■ Անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը կատարելու նկատմամբ հսկողություն է իրականացնում ոստիկանությունը: Պաշտպանական միջոցների կիրառումը չի խոչընդոտում քրեական գործ հարուցելուն:

■ Օրենքը (հոդվածներ 14, 19 և 20) սահմանում է նաև ընտանեկան բռնության ենթարկվածներին աջակցություն ցուցաբերելու պահանջներ կառավարությանը՝ աջակցության կենտրոնների, այդ թվում՝ անվճար թեժ գծերի և կացարանների միջոցով:

■ Չնայած գործող օրենսդրությանը, տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը օրենսդրորեն և գործնականում ապահովվելու և կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը կանխելու հարցում երաշխիքները դեռևս անբավարար են:

■ Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդումը²² եզրակացնում է, որ չնայած առաջընթացին, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետ կապված առկա են հետևյալ խնդիրները:

22.Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդում: Տե՛ս <https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf>

- **Ընտանիքում բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումներ կամ կարգավորումների բացակայություն**

- Մասնավորապես, ընտանիքում բռնության գործերով ընտանիքում բռնություն գործադրած անձի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու մոտեցումը հակասում է միջազգային չափանիշներին:
- Գործնականում կանխարգելիչ նպատակ հետապնդող հաշվառումը և բռնություն գործադրած անձանց մշտադիտարկումը պատշաճ չի իրականացվում:
- Անհետաձգելի արգելող որոշման կայացումը ուժի մեջ է մտնում միայն բռնություն գործադրած անձին հեռախոսով ծանուցելուց, նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց և հանձնման մասին վերջինիս ստորագրություն ստանալուց հետո, որը կարող է ժամանակատար լինել, և դրանով, ինչն ավելի խնդրահարույց է, բռնություն գործադրած անձի դատավարական իրավունքները գերադասվում են տուժողի կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ՝ խախտելով միջազգային չափանիշները:
- Ընտանիքում բռնության ոչ բոլոր տեսակների համար է նախատեսված պատասխանատվության մեխանիզմներ պետական օրենսդրությամբ, ըստ այդմ, իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին: ՀՀ քրեական օրենսդրությամբ քրեորեն պատժելի արարքներ են համարվում ֆիզիկական բռնության որոշ տեսակները, ինչպես նաև սեռական բռնությունը, սակայն, իբրև հակաիրավական արարք, ամրագրված չէ, օրինակ՝ հետամտումը:

- **Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ**

- Կարծրատիպային մտածելակերպն ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում բռնության ենթարկված անձի բռնության մասին բարձրաձայնելու հարցում: Այս խնդիրը հատկապես ակնհայտ է գյուղական համայնքներում, որտեղ հարցերի քննարկումը կրում է զուտ ներընտանեկան բնույթ:
- Կարծրատիպային մոտեցումն իրավասու պետական

մարմինների ներկայացուցիչների կողմից շատ հաճախ բերում է կրկնակի զոհացման, ինչը կարող է խոչընդոտել հետագայում նման դեպքերի բացահայտումը, որի արդյունքում մեծամասամբ տուժողները խուսափում են կրկին դիմել իրավասու մարմիններին:

- Հասարակության մեջ կանանց դերի և բռնության վերաբերյալ թյուր պատկերացումներ են ձևավորվում նաև զանգվածային լրատվության միջոցների բռնության վերաբերյալ սխալ տեղեկություն ներկայացնելու պատճառով: Ավելին, հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումները և ֆիլմերը ևս կարող են բացասական ազդեցություն ունենալ բռնության վերաբերյալ սխալ պատկերացումների ձևավորման մասին:
- Լրատվամիջոցների և, հատկապես, հեռուստատեսության ազդեցություն է ունենում ընտանիքում կոնֆլիկտները լուծելու մոդելների վրա և նպաստում են կնոջ և տղամարդու դերերի ավանդական ընկալման և հայրիշխանական կարծրատիպերի վերարտադրությանը, օրինակ՝ հայկական հեռուստասերիալներում տղամարդը հաճախ ներկայացվում է որպես իշխող, կնոջը որոշումների գործընթացում չներառող, կոնֆլիկտներն ուժի, երբեմն անգամ ծեծի միջոցով լուծող, իսկ կինը՝ որպես հնազանդ, առօրյան սուրճի բաժակի շուրջ անցկացնող և մանր դավադրություններ հյուսող: Քանի որ մեդիան նման կերպարները չի ներկայացնում որպես անընդունելի և անգամ դատապարտելի, այլ հակառակը, արդարացնում է նման մոտեցումը նրանով, թե «մենք արտապատկերում ենք իրականությունը», նույն անընդունելի իրականությունը շարունակվում է վերարտադրվել, հատկապես երիտասարդների շրջանում:

• **Պետության կողմից տրամադրվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն.**

- Պետության կողմից բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին լիարժեք աջակցություն հարցը շարունակել է խնդրահարույց մնալ՝ որոշ աջակցության կենտրոններ հիմնադրվել են միայն 2019 թվականին: Հանրապետությունում գործել է ընդամենը 6 աջակցության կենտրոններ, որոնցից երեքը՝ Երևանում, մյուս երեքը՝ Սյունիքի,

Շիրակի և Լուռու մարզերում: 2019 թվականի որչ ընթացքում
Հայաստանում չեն գործել պետության կողմից շահագործվող
կացարաններ: Կացարանի ծառայությունները մատուցվում
էին երկու հասարակական կազմակերպությունների կողմից:

- Չկա հատուկ անվճար «Թեժ գիծ», որը մատչելի կլիներ բոլորի
համար, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանցք, և
շուրջօրյա աջակցություն և խորհրդատվություն կտրամադրեր
կարիքավոր անձանց, թեև որոշ աջակցության կենտրոններ
ունեն «Թեժ գծեր»:
- Բացակայում է իրավասու գերատեսչությունների կողմից
համակարգված ձեռնարկումների իրականացումը:
Իրականացված քայլերը կրում են էպիզոդիկ բնույթ և չեն
իրականացվում համակարգված կերպով: Ընտանիքում
բռնության դեմ պայքարի և դրանից տուժած անձանց
բազմամասնագիտական պայքարի համակարգը կայացած չէ

- **Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ
վիճակագրական տվյալների բացակայություն**

- Հայաստանում, ինչպես նախորդ տարիներին, շարունակել է
խնդրահարույց մնալ ընտանեկան բռնության վիճակագրական
ճշգրիտ համակարգված տվյալների բացակայությունը:
- Ընտանեկան բռնությունը հայտնի է որպես լատենտային
բնույթ ունեցող բռնության տեսակ, ինչը նշանակում է,
որ տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշներն
ամբողջությամբ չեն արտացոլում իրական պատկերը:
- Իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալները
վկայում են, որ ընտանիքում բռնությունն անհամամասնորեն
ազդում է հատկապես կանանց վրա:
- Առկա է միասնական և համապարփակ վիճակագրության
վարման անհրաժեշտություն, որը ոչ միայն կներառի ոլորտում
պետական մարմինների գործունեության քանակական կողմը,
այլև հնարավորություն կտա նախանշելու ընտանեկան
բռնության երևույթի ընդհանուր և հատուկ կանխարգելման
ուղղված միջոցառումները:

- **Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների
ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական
պատրաստվածություն և իրազեկման պակաս**

- իրավասու մարմինների ներկայացուցիչների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածությունը, մասնավորապես՝ ընտանիքում բռնության դեպքերի շուրջ առանձին կարողություններ դրսևորելու հմտությունների բացակայությունը բռնությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ընտանեկան բռնության դեպքերի հետագա կանխարգելման տեսանկյունից խնդրահարույց է: Դա կարող է հանգեցնել իրավունքների կրկնակի խախտման այն առումով, որ փաստացի սահմանափակում է բռնության ենթարկված անձանց՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին բերում է խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների:
- Օրինակ՝ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ քրեական հետապնդման տարբեր փուլերում տուժողակենտրոն, կրկնակի զոհականացման խնդիրները շարունակվում են, մասնավորապես՝ բողոքը հետ վերցնելու կամ չբողոքելուն համոզելու դեպքերը, հաշտեցման փորձերը, բարոյախրատական միջամտությունը:

Հիմք ընդունելով իր վերլուծությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը գեկույցում ներկայացրեց հետևյալ առաջարկությունները (ևույն տեղում)

1. Փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ նախատեսելով պատասխանատվության միջոցներ կանանց նկատմամբ և ընտանիքում բռնություն համարվող բոլոր արարքների համար:
2. Փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ բացառելով տուժողի հակաբարոյական արարքը՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելը:
3. Փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասում՝ այն համապատասխանեցնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած չափանիշներին:
4. Փոփոխություններ կատարել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում՝ վերացնելով բացերը և

ինդրահարույց դրույթները:

5. Սեղմ ժամկետներում ապահովել հանրապետության ամբողջ տարածքում բազմամասնագիտական աջակցության տրամադրման գործունե մեխանիզմի՝ աջակցության կենտրոնների հիմնադրումը՝ երաշխավորելով ծառայությունների անխափան մատուցման համար բոլոր անհրաժեշտ միջոցները:
6. Հնարավորինս սեղմ ժամկետում ընդունել կացարան հիմնադրելու հավաստագրի տրամադրման կարգը սահմանող կառավարության որոշումը:
7. Կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ բռնության վերացման և դրա դեմ պայքարի ու կանխարգելման ՀՀ օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը:
8. Բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ:
9. Մշակել և իրականացնել իրազեկման բարձրացման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելմանը:
10. Մշակել և ընդունել պետական ռազմավարություն և դրան կից գործողությունների ծրագիր ընտանիքում բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար:

Լուսաբանում

Վերնագիր

Գեղարքունիքում ամուսինը դաժան ծեծի է ենթարկել իր կնոջը: Ո՞րն է պատճառը:

Պատմություն

Երեսուներեքամյա մի տղամարդ սկզբում փայտով խփել է իր կնոջ գլխին, ապա ծեծի ենթարկել նրան: Մեր տեղեկությունների համաձայն՝ անցյալ գիշեր Գեղարքունիքի մարզում արտասովոր դեպք է տեղի ունեցել:

Ներքին Գետաշեն գյուղից երեսունամյա մի կին գլխի և դեմքի շրջանում արյունահոսող վսասվածքներով տեղափոխվել է գյուղի բուժկենտրոն, որտեղ նրան ցուցաբերվել է անհապաղ բուժօգնություն:

Ըստ գյուղում շրջանառվող որոշ լուրերի՝ երեսուներեքամյա ամուսինը դաժան ծեծի է ենթարկել իր կնոջը: Դեպքը տեղի է ունեցել իրենց տանը անչափահաս երեխաների ներկայությամբ:

Տղամարդը սկզբում փայտով խփել է կնոջ գլխին, ապա վսասվածքներ հասցրել՝ խփելով նրա մարմնի տարբեր մասերին: Մեր աղբյուրների համաձայն՝ վեճը ծագել է ներընտանեկան հարցերի շուրջ:

Վերլուծություն. Ի՞նչն է սխալ այս հաղորդման մեջ

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության և գաղտնիության ոտնահարում, երկրորդային զոհացում.

— Զոդվածում խախտվել է մասնավոր կյանքի անձեռնմխելիության և գաղտնիության սկզբունքը: Նշվել է գյուղի անունը, հրապարակվել է տուժողի և իրավախախտի տարիքը: Այս բոլոր տեղեկությունները կարող են բացահայտել տուժողի ինքնությունը համայնքի, ընկերների, գործատուի համար, ինչը կարող է նպաստել երկրորդային զոհացմանը կամ վտանգի ենթարկել տուժողին: Այն կարող է խաթարել տուժողի կյանքի որակը և հասարակության մեջ նրա դիրքը:

Սենսացիաներ.

— Զոդվածը նպատակ ունի սենսացիա առաջացնել՝ լուսաբանելով այդ սարսափելի դեպքը և շեշտելով, թե ինչպես է տեղի ունեցել բռնության գործողությունը. «անցյալ գիշեր արտասովոր դեպք է տեղի ունեցել», տղամարդը ... «սկզբում փայտով խփել է իր կնոջ գլխին, ապա ծեծի ենթարկել նրան», ... «գլխի և դեմքի շրջանում արյունահոսող վնասվածքներով»: Զոդվածը եզրափակվում է՝ դարձյալ կրկնելով. «Տղամարդը սկզբում փայտով խփել է կնոջ գլխին, ապա վնասվածքներ հասցրել՝ խփելով նրա մարմնի տարբեր մասերին»:

— Սենսացիա առաջացնելու և օգտագործված փայտի տեսակի վրա կենտրոնանալու փոխարեն՝ կարևոր է հաղորդել բռնության պատմության մասին, արդյոք եղել են ընտանեկան բռնության այլ գործողություններ, արդյոք դրանք հաղորդվել են, արդյոք արձակվել են կանխարգելիչ հրահանգներ, ապագայում ինչ ռիսկի է ենթակա այդ կինը և այլն: Մարդիկ պետք է հասկանան, թե հանցագործությունն ինքնին որքան բարդ է և բազմաշերտ: Լրագրողական լուսաբանումը պետք է այնպես ձևակերպվի, որ ազդի ընտանեկան բռնության, դրա լրջության, առաջացման իրական պատճառների և կանխարգելման ձևերի վերաբերյալ հանրային ընկալման վրա:

Ընտանեկան բռնության արդարացում և մեղմացում.

— Այս պատմության մեջ բռնարարին չեն մեղադրում, այլ՝ հակառակը: Տեքստում բռնության գործողությունը բացատրելու համար օգտագործվում են սենսացիոն բառեր, և միևնույն ժամանակ բռնության գործողությունը մեղմացվում է՝ անվանվելով «ներընտանեկան հարցեր»: Զոդվածում չկա «բռնություն» բառը, իսկ «ընտանեկան բռնությունը» նկարագրվում է որպես ընտանիքի «ներընտանեկան հարց»:

Բռնության կրկնվող գործողությունները նույնպես ներկայացված են որպես ոչ այնքան կարևոր երևույթ: Աղբյուրները, որոնք հաստատել են այն փաստը, որ «ամուսինը դաժան ծեծի է ենթարկել իր կնոջը», պարզապես որակվել են որպես «գյուղում շրջանառվող որոշ լուրեր», ինչը հանրության շրջանում տպավորություն է ստեղծում, որ բռնությունը հատուկ ուշադրության արժանի չէ կամ չպետք է լուրջ ընկալվի, դրանք պարզապես «որոշ լուրեր» են: Ներկայացվելով որպես մասնավոր ընտանեկան խնդիր՝ ընտանեկան բռնությունը բնականոնացվում է, և անհրաժեշտություն չի լինում իրավախախտին պատասխանատվության ենթարկելու իր գործողությունների/հանցագործությունների համար: Կանանց նկատմամբ բռնությունը լուսաբանելիս, ինչպես ցանկացած լուսաբանման դեպքում, կարևոր է գնահատել աղբյուրների կողմից տրամադրված տեղեկատվության հուսալիությունն ու ճշգրտությունը և հրապարակելուց առաջ ստուգել տեղեկատվությունը:

«Գենդերային կուրություն», գենդերազգայնության բացակայություն և կանանց մարդու իրավունքների և երեխայի իրավունքների մասին գիտելիքների պակաս.

■ Այս հոդվածում ընտանեկան բռնությունը նկարագրվում է որպես «դեպք», որը տեղի է ունեցել «անչափահաս երեխաների ներկայությամբ»: Որևէ ակնարկ անգամ չկա այն մասին, որ ընտանեկան բռնության ականատես դարձած երեխան նույնպես ընտանեկան բռնության տուժող է:

■ Չողվածը ոչ միայն չի վիճարկում կանանց նկատմամբ բռնության մասին առասպելները, այլև ընտանեկան բռնությունը սահմանում է որպես «ներընտանեկան խնդիր»: Կանանց նկատմամբ բռնության առավել տարածված ձևի փոխարեն՝ ընտանեկան բռնությունը պատկերված է որպես ամուսնության «բնականոն/ նորմալ» բաղադրիչ: Ընտանեկան բռնությունը երբեք նորմալ չէ և երբեք ընդունելի չէ: Այն լուրջ հանցագործություն է, որին պետք է համապատասխանաբար վերաբերվել:

■ Չողվածում չկան ընտանեկան բռնության ենթարկված անձանց օգնություն տրամադրող ծառայությունների մասին տեղեկություններ, չեն տրամադրվում նաև ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակագրական այլ տվյալներ, փաստական տեղեկություններ կամ փորձագիտական կարծիք:

Հավելված II. Կանանց նկատմամբ բռնությունից տուժածներին աջակցություն ցուցաբերող հաստատությունների և կազմակերպությունների տվյալները

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Թեժ գիծ – 114
www.mlsa.am

ՀՀ ոստիկանություն
Թեժ գիծ – 102
www.police.am

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
Թեժ գիծ – 116
https://ombuds.am/

Կանանց աջակցման կենտրոն ՀԿ
Թեժ գիծ – +374 99 887808
www.womensupportcenter.org

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն
Թեժ գիծ – +374 77991208
http://saccarmenia.org

Ուղեցուցում ներկայացվում են առաջարկություններ և ուղեցուցումներ գեներալին հավասարակշռված լրահաղորդումների վերաբերյալ, ինչը նշանակում է կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը տպագիր, առցանց և հեռարձակվող լրատվամիջոցներում, ինչպես նաև կանանց և տղամարդկանց ներկայացումը՝ ոչ կարծրատիպային, ոչ խտրական և ոչ սեքսիստական լույսի ներքո: Ուղեցուցը նաև լրագրողներին, խմբագիրներին և գովազդատուներին հնարավորություն է տալիս կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության ինդիքները լուսաբանելիս ցուցաբերել արհեստավարժ և էթիկական մոտեցում: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության լուսաբանումը պահանջում է զգայուն և հարգալից մոտեցում: Լրատվամիջոցներն էթիկական պատասխանատվություն են կրում՝ բնականոն չդարձնելու կանանց նկատմամբ բռնությունն այնպիսի ուղեղնների միջոցով, որոնք նպաստում են կանանց նկատմամբ բռնությանը և պարզունակացնում են այն: Լրատվամիջոցները նաև կարող են առանցքային դեր խաղալ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում և բարձրացնել մարդու հավասար և անբավարար իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, ներառյալ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE